

դրանք եւս քնարական հերոսի հոգեվիճակն ու տրամադրություններն են արտահայտում: Ահա մի քանի օրինակ՝ հիվանդ քնքշություն, մեռնող ծաղիկ, սառած հեկեկանք: գունատ հույս, փափուկ քայլեր, տխուր ամպեր, սեւ կյանք, ցուրտ ցանկություն, մեռած լույսեր, երագուն երկինք, գունատ, մահացող ծաղիկներ եւ այլն: Փոխաբերական մակդիրները բանաստեղծն ձեռք բերած նոր իմաստների շնորհիվ իրենց մեջ թաքցնում են արտահայտչական մեծ հնարավորություններ:

Մակդիրային կապակցությունների մեջ առանձնանում են գոյականով արտահայտված մակդիրները: Դրանք բնորոշ են նրանով, որ տվյալ գոյականի հիմնական հատկանիշով բնութագրվում է մակդիրային, իհարկե, փոխաբերական նշանակությամբ: Այսպես, օրինակ, արծաթ խոսքեր (Արծաթ խոսքերով աղբյուրն է խոսում...) նշանակում է արծաթի նման հնչուն խոսքեր, կամ անուրջ կույս (Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շուկը մնաց...), հեքիաթ աշխարհ (Հեքիաթ աշխարհում կլինենք մենակ...), ցավ կյանք (Ցավ կյանքի մեռնող լույսերից խաբված...) եւ այլն:

Գոյականով արտահայտված մակդիրների մեջ կան նաեւ սեռական հոլովով դրված մակդիրներ՝ խնդրյալն ցավ (եվ ես արքնացա խնդրյալն ցավից...), հիացմունքի շուկ (եւ լսում եմ հիացմունքի մի շուկ...), մահու գիշեր (Մահու գիշերն է մթնել իմ հոգում...), կարոտի կսկիծ (Միշտ նույն կարոտի կսկիծը պահած...), արեւածագի ցնծություն (Արեւածագի ցնծությամբ արբած...) եւ այլն: Քանի որ փոխաբերական մակդիրները հենվում են առարկաների միջեւ եղած զուգորդական նմանությունների վրա, ուստի պարունակում են թաքցված համեմատություն, եւ դրա շնորհիվ բնորոշումը դառնում է ավելի պատկերավոր ու տպավորիչ:

Նկատենք, որ գոյականով արտահայտված մակդիրների գործածության մեջ Տերյանը հանդես է բերում ինքնատիպ մոտեցում՝ խուսափելով նկարագրական տարրից: Նրա գործածած այս կարգի փոխաբերական մակդիրները մեծ մասամբ ունեն ածականական արժեք: Այսպես, անուրջ կույս-անքային կույս, հեքիաթ աշխարհ-հեքիաթային աշխարհ, ցնորք հուշեր-ցնորակն հուշեր, լույս փարոս-լուսավոր փարոս եւ այլն: (Հմմտ. արտույտ մանուկ, ծաղիկ տիրուհի):

Տերյանի լեզվական քննությունը ցույց է տալիս, որ նա հիմնականում գործածում է ածականով արտահայտված մակդիրներ, բայց, ինչպես վերելում տեսանք, կան նաեւ գոյականական մակդիրներ: Թեեւ քիչ, բայց հանդիպում ենք նաեւ դերբայական ձեւերով արտահայտված մակդիրների (հիմնականում հարակատար եւ ենթակայական), ինչպես՝ հրապուրող շող, ճառագայթող աչքեր, ցաված սիրտ, մոռացված երազներ, հեռացած խնդություն, մեռնող ծաղիկ, լքված հոգի, տանջող զգվանք, դուրսող հուզումներ, դալկացող ծաղիկներ, խոցող թուփանք, դուրսող խավ ար եւ այլն:

Տերյանի բանաստեղծական խոսքին բնորոշ է բարդ, բազմակի եւ բառակապակցություններով արտահայտված մակդիրների գործածությունը: Բանաստեղծը հիմնականում օգտագործում է մենադիր, պարզ մակդիրներ, որպեսզի չխախտի խոսքի սահունությունը, հստակությունը:

Բառակապակցություններով արտահայտված կամ բարդ մակդիրների գործածության առանձին օրինակների կարելի է հանդիպել միայն.

*Ինչպե՞ս չսիրեն-հեգությանը լցված
Դու յորեմապարիկ խոցված տիրամայր... (հ. 1, 237):*

*Վառիր երկունքի գիշերում խավար
Հրով մկրտված նաիրյան հոգին... (հ. 1, 237):*

*Այդ մութ ժխորում իմ սիրտն է մաշում
Մենակությունը հավիտյան խոցող... (հ. 1, 79):*

Ոչ մեծ գործածությամբ հանդիպող բարդ մակդիրները կազմված են Տերյանի բանաստեղծական լեզվին բնորոշ նրբությամբ ու ճաշակով եւ մասնակի բացառություններով դրանք իրենց բնույթով հիմնականում քնարական մակդիրներ են: Ահա մի քանի օրինակներ. *փխրահեծ* անձրեւ (Վշման *փխրահեծ* անձրեւի *հյուս* ուրվագծեր (Սքնշաղի ուրվագծեր *նրբահյուս*), *արյունալեն* ցանկություն (Ցանկությունով արյունավշտակի *հոգի*, *սրբամոր* գիրկ, *ուկեցություն* հայացք, *փխրաբույ* հուր, *մեղմախոս* առու, *փխրադալուկ* դեմք, *ուկեպայծառ* մշուշ եւ այլն:

Իսկ բազմակի մակդիրները մեծ մասամբ հանդես են գալիս հետադաս կիրառությամբ, մի հանգամանք, որն իր հերթին նպաստում է խոսքի արտահայտչականությանը: Շրջում շարադասությունը ընդգծում է մակդիրի իմաստային կողմը, եւ այն տրամաբանական շեշտի շնորհիվ բանաստեղծական խոսքում ձեռք է բերում արտահայտչական նրբություն:

*Իմ օրեր անհատկում, անխնայում եւ անպտուկ,
Ցնորքներ լուսավառ, ընդունալն ապարդյուն,
Մոռացված է հավետ արեւոտ ծեր ուղին (հ. 1, 141):*

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՁԵՂՉՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՓՈՐՁ

Է. Ս. ՄԿՐՏՅԱՆ

Խոսքի մեջ զեղչման բազմազան հնարավորություններ կան, եւ լեզվական բոլոր միավորները կարող են զեղչվել: Այդ երեւոյթը դեռեւս նկատել են գրաբարի քերականները:

Գ. Ավետիքյանը զեղչումը բացատրում է հունարեն *էլլիփսիս* «պակասումն» բառով. «յորժամ *գիր* ինչ կամ *բառ* թողեալ է, բայց լռելեայն կամ զօրութեամբ իմանի. զօր. յորժամ պակասի *նախդիրն* կամ *բայն*, կամ *դէր* բային, *յարկացեալն*, կամ *գոյականն*, կամ *նախադրութիւն* եւլն» (ընդգծումները մերն են. - Է. Ս.): Ըստ հեղինակի՝ հնչյունական, բառական, ձեւաբանական, շարահյուսական եւ այլ միավորներ կարող են զեղչվել:

Ա. Բագրատունին եւս նույնպիսի կարծիք է հայտնում: Նա նշում է, որ խոսքի մեջ զեղչումը կատարվում է համառոտության, վայելչության կրճատման, ինչ-որ բանի լռությանը հասկանալու համար՝ «զանց առնելով *գիր* ինչ կամ *բառ* կամ *մասն բառի*, որ ինքնին դիրաւ իմանի զօրութեամբ ի թաքնութեան անդ. որպիսի էր *բայն* եւ *որ դերանուն, սեռի խնդիր բային, միջակ անուն կամ խնդիր նորա, յարկացեալն, գոյականն ընդ ածականաւ, յարաբերելի դերանունն, դիմորոշ յողն առ բազում անուանաւ, նախդիր կրկնեալ հորովից եւ այլոց, եւլն»* (ընդգծումները մերն են, բացի որ դերանունից. - Է. Ս.): Եվ բազմաթիվ փաստերով ներկայացնում է նախադասության անդամների, հոդերի, այլեւայլ բառերի, կապակցությունների զեղչման դեպքերը:

Վ. Չալքիյանը այս հարցում չի ծավալվում. առանց մանրամասն մեկնաբանությունների վկայում է լեզվական տարբեր միավորների ու կառույցների վերաբերող օրինակներ:

Արդի հայերենի քերականները, օգտագործելով անցյալի քերականների (հատկապես Ա. Բագրատունու) եւ ժամանակակիցների ուսումնասիրությունները, մանրամասն շարադրում են գլխավոր եւ երկրորդական անդամների, թերի նախադասության հետ կապված այլեւայլ բառերի, արտահայտությունների զեղչման դեպքերը:

Սույն ուսումնասիրությամբ մեր խնդիրը ոչ այնքան գրաբարում ենթակայի եւ ստորոգյալի զեղչման դեպքերի հաջորդական շարադրումն է, որքան *նրանց զեղչման հիմունքների որոնումը*: Իսկ դա իրագործելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ գրաբարի նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները (անորոշ եւ անցյալ դերբայներով կազմված նախադասություններ. թեք հոլովներով ենթակայով եւ համապատասխան ստորոգյալներով կառույցներ. անվանական, թերի նախադասություններ եւ այլն):

Ենթական եւ ստորոգյալը «մտնում են նախադասության կառուցվածքային հիմքի մեջ, հետեւաբար, միջուկային միավորներ են կամ միջուկներ, որոնք հավասարապես ենթադրում են մեկը մյուսի առկայությունը» (ընդգծումը մերն է. - Է. Ս.):

Հիրավի, ենթականի առկայությամբ ենթադրվում է զեղչված ստորոգյալը, ինչպես նաեւ՝ հակառակը: Բայց սա հեշտ իրագործելի կլիներ, եթե նախադասությունը կառուցվածքային բազմազանություններ եւ առանձնահատկություններ չունենար:

Ուրեմն ընդգծենք գլխավորն ու ելակետայինը. բավական է ստույգ իմանալ ենթականի եւ ստորոգյալի գործառնությունները, հեշտ եւ դյուրին կլինի ցույց տալ նրանց հետ առնչվող առանձնահատկությունները, լրացական կապերն ու դրսեւորումները: Այժմ դիմենք փաստերի, ապա կատարենք համապատասխան բացատրություններ եւ եզրակացություններ: Այսպես՝

1. Եւ *վերանալն* եւ *բարձրանալն* զի էջ ի խոնարհութիւն մարմնովն. վասն այնորիկ նորին խոնարհութեան մարմնոյն կերպարանօք բարձրանայ (Ազ., 226): 2. Այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն եւ ի գոյանալ եկին ի չգոյէ եւ ի գոյէ. *որպէս երկինք վերինք* եւ *որ ինչ յերկինս*, եւ *երկինք երեւելիք որ ի ջուրք*, եւ *երկիր*, եւ *ամենայն ի անան* եւ *ի անա. յորմէ ամենայն*, եւ *ինքն ոչ յունեքէ* (Եզն., 6): 3. Զանգի ոչ եթէ կարօտ ինչ ոք իւրք էր, եթէ վասն այնորիկ խնայիցէ՝ իւր միայն սեպիականեալ զկենդանութիւնն. եւ *անգոր* եւ *դկար*, եթէ զանծին եւեթ պահիցէ զզօրութիւնն. եւ *ոչ անուագ ի գիպութեանէ*, եթէ ինքեան եւեթ պահիցէ զգիտութիւնն. եւ *ոչ կարօտ յիմաստութեանէ*, եթէ յորժամ այլոց բաշխիցէ զիմաստութիւնն իւր. կարծիք ինչ կատարութեան ի ներքս մտանիցեն (անդ., 8): 4. Ոչ սկիզբն առեալ յունեքէ լինել Աստուած, *այլ ինքն ինքեանմէ մշտնջենաւոր. ոչ ի փեղուք ուրեք, այլ ինքն ինքեան փեղի. ոչ ի ժամանակի իմիք*, այլ ժամանակք ի նմանէ գոյացան. եւ *ոչ միայն քան զերկինս երկցագոյն*, այլ եւ քան զկարծիս մտաց մարդկան եւ իրեշտակաց (Ե., 58-60):

Այս նախադասությունները կառուցվածքային հատկանիշներով միօրինակ չեն: Առանձին նախադասություններ անորոշ եւ անցյալ դերբայներով հետաքրքրակալ կառույցներ ունեն, սակայն այս դեպքում դա չէ, որ ուշադրություն է գրավում, այլ մեկ ուրիշ երեւոյթ, որ կարծես համընդհանուր է բոլոր օրինակների համար. խոսքը վերաբերում է *զեղչման* «քերականական ձեւին», որը գրաբարում (եւ ոչ միայն գրաբարում) չափազանց տարածված եւ ուշագրավ երեւոյթ է, իսկ նախադասության կառուցվածքն ու բովանդակությունը ճշմարիտ ըմբռնելու, այսինքն՝ նրա տեսակներն ու բաղադրամասերը որոշակի դարձնելու համար՝ շատ կարեւոր: Որքան մեծ են զեղչման գործառնության սահմանները, նույնքան էլ կարեւոր են նրանց առնչվող մեկնաբանությունները:

1-ին օրինակի հոմանիշ բայերի անորոշ դերբայական ձեւերը գործածված են որոշյալ առումով, առանձնակի, առանց խնդրի կամ պարագայի, առանց ստորոգելիական կապի (միայն ձեւական կապ կա երկրորդական նախադասության հետ), եւ պարզ է, որ գլխավոր նախադասությունն են երկրորդական ստորոգյալի ամբողջական զեղչումով (վերանալն ու բարձրանալն *այն է*): Ձեղչված է նաեւ երկրորդական եւ երկրորդական կարգի նախադասությունների ենթական *Տէրն*, բայց կառույցը ոճի արժեք ունի ստորոգման զեղչումով: Ձեղչումը, առանձնապես նրա բնույթն ու եղանակը ներգործում են խոսքի ոճական կառուցվածքի վրա. դա երեւում է ստորոգյալի ամբողջական զեղչումից. բայց այն կարող է տեղի ունենալ նաեւ ստորոգյալի մասի զեղչման պայմաններում: Այսպես 2-րդ օրինակի ենթականի եւ էական բայի (ստորոգյալի հանգույցի) զեղչումով ուշագրավ խոսք է կառուցվել: 10 միավորներից միայն վերջինում զեղչում չկա: Առաջինում զեղչումը չնկատելու դեպքում շփոթ կառաջանա (*որ* վերադիրը ենթակա կհամարվի), մի քանի դեպքում է՛լ ենթական է զեղչված, ե՛ւ հանգույցը: Եւ *անգոր* եւ *յկար* կապակցության մեջ զեղչված են *նա, ոչ էր* (= նա էլ անգոր չէր, տկար չէր/անգոր ու տկար չէր), եւ *ոչ նուազ* ի *գիտութենէ* կապակցության մեջ՝ *նա, էր* (=նա ոչ էլ նվազ էր գիտությունից՝ ոչ էլ գիտության պակաս ուներ), եւ *ոչ կարօր* յիմաստութենէ կապակցության մեջ՝ *նա, էր* (=նա ոչ էլ կարոտ էր իմաստությունից՝ կարոտ չէր նաեւ իմաստության): Ընդգծված կապակցությունները համադաս միավորներ են, եւ զեղչումը նրանցում նույնն է: Իսկ եթե ստորադաս կապակցության մեջ դրան ավելանում է զեղչում, ասես այլ կառույց կամ ոճ է առաջանում: Օրինակ՝ 3-րդ նախադասությունը շատ ծավալուն է, բազմաթիվ զեղչումներ (հատկապես՝ ստորոգյալի) կան: Բայց ուշադրություն են գրավում լրացական կապակցություններում եղած զեղչումները, որոնք գրաբարում ոճական առանձին շերտ են կազմում: *Որ ինչ յերկինս* =ինչ որ *կա* երկնքում. *որ ի քուրց* =որ ջրերից է *կազմված*: Որ հարաբերականով կազմված այս տեսակ կապակցություններում զեղչումը քերականները նկատում են: Ի միջի այլոց, Ա. Մեյեն այսպիսի կառույցները համարում է բուն անվանական նախադասության մի տեսակ, հարաբերական նախադասության կրճատված ձեւ, որն ունի հնդեվրոպական ծագում եւ կիրառվում է թե՛ մատենագիրների աշխատություններում, թե՛ Աստվածաշնչում: Նա գրում է. «Յնդեվրոպական բուն անվանական նախադասության գլխավոր հետքը, որ գոյություն ունի հայերենում, հանդիպում է հարաբերական նախադասությունների մեջ<...>: Առանց *եւ* բայի հարաբերական նախադասությունը մեծ մասամբ շատ կարճ է. այն բաղկացած է լինում հարաբերական դերանունից եւ նախդրավոր մի բառից կամ վերաբերականի սեռականից, բայց ոչ թե ածականից կամ ինչ-որ սեռականից»⁶: Ապա օրինակներ է բերում Եզնիկից, Փարպեցուց, Աստվածաշնչից (արուեստին *որ ի բնութեանն*. նախատակութիւնն *որ առ Աստուած*. ի մեջ ջրոյն *որ ի վերոյ հասարարութեանն*—ընդգծումները մերն են—է. Մ.): Նկատելի է, որ նախադասության զեղչման հետ կապված դրսեւորումները բազմազան են: Հիշյալ նախադասությունների՝ զեղչման հետ կապված թեթեւակի զուգադրումից անցնենք նախադասության ներքին միավորների բնութագրությանը՝ բերելով այլ օրինակներ:

Այսպես՝

Առաջին. Որոյ եղեալ այր քաջ՝ սքանչելապէս մղեաց զպատերազմունս՝, եւ ի պարտել զվզըրկն՝ որ անուանէր հաքան՝. նուաճեալ՝ տայ զդուստր իւր նմա կնութեան՝. նա եւ այլ կանայս առեալ, զմերձաւորս Արտաշնի՞, եւ բազում որդիք եղեալ՝, զօրացեալ բռնութեամբ ունի զկողմանսն զայնոսիկ՞. թէպէտ էր ի համար Արտաշնի՞՞ այլ ոչ տեսանէ զնա՞ (Խ., 286):

Այս նախադասությունը բաղկացած է 10 միավորից: Ենթակա զեղչված է 2-ում (3-րդում, 5-րդում), միավորված՝ 4-ում (2-րդում, 8-րդում, 9-րդում, 10-րդում): Ստորոգյալ մասնակիորեն զեղչված է 2-ում՝ կանայս *առեալ <է>* (6-րդում), որդիք *եղեալ <եւ>* (7-րդում). դերբայական են 4-ը՝ *եղեալ* (1-ինում), *պարտել* (3-րդում), *առեալ* (6-րդում), *եղեալ* (7-րդում), ընդ որում, 1-ը՝ անվանական բաղադրյալ ստորոգյալի կազմում՝ *եղեալ այր* (1-ինում), ժյուսը՝ նախդրավոր ձեւում՝ *ի պարտել* (3-րդում):

Մնում է պարզել, թե ի՞նչ բովանդակություն ունի զեղչումը կամ ի՞նչ միջավայրում եւ ի՞նչ գործոններով է տեղի ունենում:

Ձեղչումը պայմանավորված է *ներքին* եւ *արտաքին* գործոններով:

Ներքին է այն գործոնը, որը տվյալ նախադասության միջավայրում է, *արտաքին* որը այդ միջավայրին նախորդած որեւէ միջավայրում է:

Այսպես՝ 3-րդ միավորի ենթական պետք է լինի *նորա*՝ սեռական հոլովով, որովհետեւ ստորոգյալը արտահայտված է անորոշ դերբայի նախդրավոր ձեւով՝ *ի պարտել <նորա> զվզըրկն*. սա *ներքին գործոն է*: *Նորա* դերանուն-ենթական եւս որոշակի չէ, քանի որ 1-ին միավորի ենթականից (*որոյ*) չի հասկացվում, թե գործողություն կատարողը ով է: Դա բացահայտվում է նախորդած հաղորդումից, որը կարելի է անվանել *արտաքին հաղորդում*, ըստ որի՝ *նորա*-ն Պերոզմատն է (որին Բուրզը փախցնելով փրկեց): Սա էլ *արտաքին գործոն է*:

Գրաբարում, որոշ կառուցվածքի միավորյալ նախադասություններում, նույն ենթական ունենում է անդեմ եւ դիմավոր բայ-ստորոգյալներ, ընդ որում՝ անդեմ ստորոգյալի պահանջով ենթական դրվում է սեռական հոլովով (հմտ. համ. 1,2 միավորները՝ *որոյ եղեալ <...> մղեաց*): Ենթականի այս տեսակ միավորվելը հավասարվում է զեղչման, որը բացատրվում է շարահյուսական միավորների կապով, այսինքն՝ *ներքին*, այն էլ՝ *քերականական գործոնով*:

5-րդ միավորի ենթական զեղչված է. այն վերականգնվում է շարահյուսական կապի միջոցով: Այդ ենթական *Վզըրկն է՝ Խաքանը* (որը պարտվելուց հետո, նվաճվելով «Պերոզմատից», իր դուստրը նրան կնության է տալիս): Ուրեմն շարահյուսական կապից իմացվում է, որ 5-րդ միավորի ենթական 4-րդի ուղիղ խնդիրն է (ի պարտել *զվզըրկն*):

Այստեղ կա նաեւ *զուր քերականական* մի *երեւոյթ*. *նուաճեալ՝ տայ զդուստր իւր նմա կնութեան* միավորի (5-րդ) ենթականի հոլովի հարցն է. ուղղակա՞ն է, թե՞ սեռական: 1-ին միավորի ենթականի (*որոյ*) պես կարող էր լինել *Վզըրկայ*, այսինքն՝ ինչպես *որոյ եղեալ <...> մղեաց*, այնպես էլ *Վզըրկայ <...> նուաճեալ՝ տայ*, բայց քանի որ *նուաճեալ*-ը *կրավորական իմաստով* է, ուստի ճիշտը ուղղականն է՝ *Վզըրկ*: Սեռական հոլովով ենթականի դեպքում *նուաճեալ*-ը կլիներ *ներգործական նշանակությամբ* եւ կունենար ուղիղ խնդիր (հմտ. *նոցա նուաճեալ զգեղս* եւ *զագարակս*): Սա էլ *ներքին գործոն* է:

Ստորոգյալի զեղչումը եւս տեղի է ունենում նույնպիսի առնչակցություններում, խոսքի, նախադասության նույնպիսի միջավայրում: Այս նախադասության մեջ զեղչված է պարզ ստորոգյալի *եւ* օժանդակ բայը, որը բացատրվում է զուտ քերականական օրինաչափությամբ. հոգնակի ենթական ունենում է հոգնակի ստորոգյալ՝ *որդիք եղեալ են*, եւ հենց այդ օրինաչափության հայտնությամբ էլ տեղի է ունենում զեղչում՝ *որդիք եղեալ*: Մի այլ դեպքում ոճը, քերականական օրինաչափությունը կարող են այլ տեսակ զեղչում առաջացնել, որը պայմանավորված է խոսքի միջավայրով, հեղինակի խոսքի խոսքային անհատականությամբ:

Օրինակ երկրորդ. Բայց Արշակ արքայ Յայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի ետուն ընդ նմա ճակատս՝, եւ յաղթել ոչ մի ամ ոչ կարացաք՝. եւ ելեալ է եկեալ ոսիւք իւրովք՝ (Բ., 256):

Նախադասության կառուցվածքի, ոճի, ստորոգումների փոփոխմամբ զեղչված ենթակաները [Արիք՝ Պարսք (պարսիկք, մեք=պարսիկներս արիներս), նա (Արշակը)] եւ ստորոգյալը (կռուր, ետ պատերազմ) կարելի է վերականգնել միայն վերը առաջարկված գործոններով: Այստեղ էլ դեր ունի նախորդած նախադասությունը (միավորը):

Այս օրինակների թեթեւ վերլուծությունից արդեն, մեր կարծիքով, կարելի է ընդունել *ենթականի եւ ստորոգյալի զեղչման երեք հիմունք*:

ա) *Արտաքին կամ հաղորդման*.— Սա ավելի շատ վերաբերում է ենթականի իբրեւ գործողություն կատարող առարկայի: Նախադասության միջավայրից դուրս տրված հաղորդման, տեղեկության հիման վրա, որպես նախապես ծանոթ եւ չկրկնվող առարկայի անուն, հասկացություն, երեւոյթ եւ այլն, տվյալ նախադասության մեջ զեղչվում է ենթական: Իսկ եթե գործողությունն էլ այդպիսի պատկեր ունենա, հետեւապես ստորոգյալն էլ կզեղչվի այդ եղանակով: Պարտադիր չէ, որ հաղորդման օբյեկտը ենթակա (սուբյեկտ) լինի. այն կարող է լինել նաեւ խնդիր (ներառյալ նախդիրների եւ նախադրությունների խնդիրը), ստորոգելի, կոչական բառ, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, պարագա:

Օրինակ՝ Ապա թէ ի վերայ հայ հողոյն խիստ ինչ *բարբառեցի*. *գիտասցիք*՝ զի որ օր *հասանէ* յերկիրն Յայոց, զնոյն *չայն ածէ* ընդ քեզ եւ զնոյն պատերազմ *նորոգէ* ընդ քեզ. զնոյն ճակատս եւ զնոյն թշնամութիւն *յուզէ* (Բ., 256). ընդգծված ստորոգյալների ենթակաները զեղչված են, դրանք կարելի է վերականգնել նախորդ նախադասությունների հաղորդումներից, տվյալներից թագաւորն Պարսից *Շապուհ* կոչեաց զդիւթսն եւ զաստեղագէտսն եւ զքաւեայսն. քաւեայքն եւ աստեղագէտքն ասեն ցարքայն: Ուրեմն *գիտասցիք* ստորոգյալի ենթական՝ *դու*, վերաբերում է *Շապուհին*, որը հաղորդումներից մեկում ենթակա է, մյուսում՝ անուղղակի խնդիր: Մյուս ստորոգյալների ենթակաները ներկայացնում են միեւնոյն առարկան (*նա* բարբառեցի, հասանէ, ծայն ածէ, նորոգէ, յուզէ): Տվյալներից պարզվում է, որ դա Արշակ թագավորն է. Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Յայոց *Արշակ*. առցես քեզէն զծեռանէ արքային Յայոց *Արշակայ*, հարցցես ցնա բանս. դարձեալ առցես դու զծեռանէ *նորա*. լուիցես դու բանս *ի նմանէ*. յետ արձակելոյ քո *զնա* ի Յայս: Վերականգնվող ենթակաները նույն առարկան են նշանակում, եւ նախորդ նախադասություններում այդ առարկան նշանակող բառերը կատարում են ենթականի, հատկացուցչի, անուղղակի, ուղղակի խնդիրների պաշտոններ:

Սա հաստատում է ենթականի զեղչման *առաջին հիմունքը*:

Նույն հիմունքով զեղչվում է նաեւ ստորոգյալը՝ Ինքնին մեծ եպիսկոպոսապետն Յայոց Ներսէս. եւ մեծ նահապետն Մամիկոնեան տոհմին, որում անուն Վարդան կոչիւր. եղբայր սա մեծի ստրատելատին Յայոց որում Վասակն կոչէր. որ դայեակք եւ սնուցիչք էին թագաւորին Արշակայ (Բ., 164). *Ներսէս, նահապետն* ստորոգելիների հանգույցները զեղչված են, որոնք կապ ունեն նախորդ նախադասության հաղորդման հետ: Այն է՝ Այսոքիկ են իշխանքն, որը չոգան ի թագաւորէն մեծէ Արշակայ ի Յայոց աշխարհէն առ կայսրն Յունաց առ Վաղես (ամոյ): Ուրեմն *Ներսէս էր, նահապետն էր*:

բ) *Ներքին կամ շարահյուսական կապի եւ փոխհարաբերության*.— Այս հիմունքով զեղչումը շատ տարածված է: Բարձր նախադասության ներսում բաղադրիչ միավորների շարահյուսական կապով, ինչպես նաեւ հաղորդում-տվյալներով հնարավորություն է ստեղծվում, որ զեղչվեն ենթակաները եւ ստորոգյալները:

րը: Ձեռնդրում տեղի է ունենում ե՛լ համադաս, ե՛լ ստորադաս միավորներում:

Օրինակ՝ Յայնմ ժամանակի կոչեր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Յայոց Արշակ. եւ մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով եւ մեծաւ փառօք (անդ, 194). համադաս նախադասութեան ուղիղ խնդիրը՝ *զթագաւորն (Արշակ)*, մյուս համադորի զեղչված ենթական է. վերականգնենք եւ *թագաւորն* Յայոց *Արշակ* մեծարեցաւ ի նմանէ (ի Շապահոյ):

Եւ այնչափ չար էին արքն երկոքին, զի անգամ իւրեանց ունեք ոչ ողորմէին. այլ անխնայութեամբ դատէին զօտարս եւ զիւրեանց ընդանիս (անդ, 276). համաստորադաս նախադասութիւնների միավորված ենթական զեղչված է՝ *անքա* (Մերութան եւ Վահան), որը երեւում է զխափոր նախադասութիւնից՝ *արքն (երկոքին)*:

Արդ՝ եկայք պատմեսցուք ձեզ, եղբարք (Ազ., 412). երկխոսություն է, ենթակաները վերականգնելը դժվար չէ՝ *դուք, մենք*, այսինքն՝ խոսակիցը եւ խոսողը (թեեւ *եկա՛յք* կարող է նաեւ եղանակավորող լինել):

Ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզիս՝ առ հասարակ ոչ զեզ թողոյր եւ ոչ զարու (Բ., 34). զեղչված է *թողոյր* ստորոգյալը՝ *ոչ զարու թողոյր* (Այլ բան է, եթե կառույցը լիներ *ոչ թողոյր զեզ եւ զարու* ստորոգյալի զեղչում չէր դիտվի: Իսկ *ոչ զարու* կապակցության *ոչ* ժխտականը հենց հուշում է բայ-ստորոգյալի զեղչումը):

Արդ՝ նահապետքն կարգեալք, Ադամն առաջին աստուածաստեղծ, այսինքն Ադամ եւ Սէթ, եւ ի նմանէ Յարեղ, եւ ի նմանէ Ենովք (Ազ., 166). զեղչված են հանգույցը (կարգեալք *եւ*, Ադամն *է*, Սէթ *է*) եւ բայ-ստորոգյալը՝ *ծնաւ/եղեալ է (ի նմանէ ծնաւ Ենովք...)*:

գ) *Չուր քերականական-ոճական*.— Սա նախորդ հիմունքից անջրպետված չէ. որովհետեւ շարահյուսական կապն էլ քերականական գործոն է: Նկատելի է, որ որոշ կառույցներում զեղչումը խստորեն կապվում է քերականական ըմբռնման, քերականական որոշակի օրինաչափության, հեղինակային կամ արդեն ընդհանրության վերածված ոճի հետ: Օրինակ՝ այդպիսիք կարող են լինել թեք հոլովներով ենթակաները, ինչպես նաեւ նրանց ստորոգյալները, դերբայական, հարաբերական նախադասությունների, այլեւայլ ոճական կառույցների գլխավոր անդամները: Օրինակների հաճախականությամբ այսպիսի կառույցները կարող են զիջել *ք* կետում նշված կառույցներին, սակայն մի բան պարզ է, որ նրանց միջեւ նուրբ տարբերություններ կան:

Օրինակ՝ եւ *ոչ տալին* անխտիր *արշաւել* զերկիրն Յայոց, եւ *ոչ նալել* (Բ., 34). այստեղ առանց բառա-քերականական ըմբռնման հնարավոր չէ ստորոգյալի զեղչված բաղադրիչը վերականգնել՝ *ոչ տալին* ժխտական մասնիկ է), որոնք պարզ ստորոգյալի պաշտոն են կատարում:

Եվս մի քանի օրինակներ՝ Ապա մինչդեռ միայն սկիզբն եւ կատար է ինքն միանգամայն, յամենայն արարածս ինքն ինքեան միայն էր, եւ *ոչ որ էր զօրավիզն, եւ ոչ ընկեր որ եւ ոչ նման նմա* (Ազ., 154). ընդգծված կառույցը քերականական-ոճական բնույթի է. քերականական է, քանի որ *էր* հանգույցը վերաբերում է նաեւ *ընկեր, նման* ստորոգելիներին, ոճական է, որովհետեւ *ոչ որ* դերանուն չէ. նրա բաղադրիչները փոխառնվելով (*որ ոչ*) կամ առանձնացված գործածվելով, կրճատվելով ստեղծում են ոճ (*ոչ որ/ոչ —*)⁹:

Հարաբերական նախադասություններից շատերը ոճական կառույցի բնույթ ունեն, որոնցում զեղչումը ակնհայտ է: Օրինակ՝ Արդ բարիօք է արեգակն եւ զեղեցիկ բնութեամբ, եւ մեզ եւ ամենայն արարածոց՝ *որ ի ներքոյ երկնից* (Եզն., 12): Ժուժկալութեանց արդարոցն մեղութեանց, *որ եւ բոլր ի շաբարութեան աշխատութեանց* (Ազ., 374):

Այդպիսի կառույց կարող է կազմվել նաեւ *քե* շաղկապով՝ Ահա ասացաք եւ յաղագս մահուանն Շամիրամայ, *քե ուսդի՛ եւ ո՛րպէս* (Խ., 68):

Մեր կողմից ներկայացված ենթակայի եւ ստորոգյալի զեղչման հիմունքները առանձին-առանձին պատկերացնելուց զատ, անհրաժեշտ է նաեւ ընդունել նրանց միասնական գործառույթը, փոխադարձ կապի առկայությունը: Խոսքի, նախադասության բազմազանություններից ծագում է զեղչման բազմազանությունը, հետեւաբար նույն նախադասության մեջ երեք հիմունքներն էլ կարող են գործառել, ուստի նրանց միասնական գործառույթի հաշվառումը եւս կարեւորվում է:

Օրինակ՝ Որպէս առաջնոյ մարդոյն՝ մինչ չեւ յանցուցեալ էր՝ հնազանդ էին, եւ ոչ մեղանչականք (Եզն., 72). այստեղ երեք հիմունքներն էլ գործում են: *Առաջին (ա)* հիմունքով վերականգնում ենք *հնազանդ էին* ստորոգյալի ենթական՝ *զազանք* (նախորդ նախ. որպէս ոչ Դանիելի *զազանքն* վնասեցին): *Երկրորդ(ք)* հիմունքով վերականգնում ենք *մինչ չեւ յանցուցեալ էր* երկրորդական նախադասության ենթական *որն*, որը փոխարինում է մարդ առարկային (գլխավոր նախադասության մասրդոյն հանգման խնդիրը): *Երկրորդ(ք)* եւ *երրորդ(զ)* հիմունքներով վերականգնում ենք *էին* հանգույցը *ոչ էին մեղանչականք (մինչ, չեւ, ոչ ոճ են ստեղծում, ընդ որում՝ վերջինս նաեւ նպաստում է հանգույցի զեղչմանը)*:

Ենթակայի եւ ստորոգյալի զեղչման երեւութները, վերջիվերջո, պետք է պարզաբանել հենց ենթակայի եւ ստորոգյալի բնութագրումների հիման վրա, որտեղ կարեւորվում են երկու մոտեցումներ՝ հոլովական ի՛նչ արտահայտություն ունի ենթական եւ զեղչման ի՛նչ չափեր է ընդգրկում, մյուսը՝ ստորոգյալը, ի՛նչ կազմություն ունի եւ ի՛նչ չափով է զեղչվում:

Բառիմաստային (թեմատիկ) տվյալ խմբավորումը ակադ. Գ. Ջահուկյանը սահմանել է հետեւյալ կերպ. «Վաղընշահայերենը պիտի ժառանգած լիներ մարդու, սեռի, տարիքի եւ ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ հնդեվրոպական անվանումներ՝ տարիքային որոշակի սահմանափակումներով: Սրանց մեջ զգալի թիվ են կազմում համապատասխան մանկական բառերը՝ պահպանված գերազանցապես հայ բարբառներում: Հնդեվրոպական ցեղակցական անուններին գումարվել են ազգակցական տարբեր աստիճաններ նշող նոր անվանումներ՝ գերազանցապես ժառանգված հնդեվրոպական անվանումների բազայի վրա եւ նկարագրական բնույթի»:

Առաջնորդվելով լեզվաբանի միանգամայն ճիշտ ցուցումներով՝ մարդկություն, սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ արտացոլող բառերը խմբավորել ենք հետեւյալ կերպ՝ 1) *արյունակից եւ ոչ արյունակից* (ամուսնության դեպքում՝ *հաս-չհաս*) անծեր՝ համապատասխան անվանումներով, որոնք ստորադասվում են՝ ա) *հայր եւ հայրական կողմի հարազատներ*, բ) *մայր եւ մայրական կողմի հարազատներ*, 2) *ամուսին-կին-հարս ընտանեկան աստիճաններ* (ազգակցական նշանակումներ), 3) *ընդհանրական չափանիշներով ճանաչված գերդաստանային կազմ*:

Հասկանալի է, որ չափազանց դժվար է վերականգնել հայ ընտանիքի (գերդաստանի) վաղընշական շրջանի կառուցվածքը, կազմը, արյունակից, ազգակից, մերձակից, խնամի-բարեկամ՝ իրենց աստիճաններով հանդերձ, բայց մեր առաջադրած ենթախմբավորումները հնարավորություն են ընձեռնում, օրինակ, *հարսը, փեսան, տատը, ամերը, զոքանչը, քենին* եւ այլն դիտել իբրեւ ոչ-արյունակիցներ, որոնք այդպես էլ չեն մտնում սերնդաբանության եւ ժառանգասեփականատիրական միավորների մեջ, այլ կերպ՝ չեն ապահովում հնից ի վեր սահմանած՝ «Ադամ ծնաւ զՍէթ, Սէթ ծնալ զԵնովք, Ենովք ծնաւ...» հերթական այս թվարկմանը, որ գտնում ենք մատենագիտական հին երկերում:

Գ. Ջահուկյանը վաղընշահայերենի համար առանձնացրել է բառիմաստային 23 խմբավորում, որից 2-րդը՝ «Մարդկություն, սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն» անվանումներն են, բառերը, որի ցանկում արձանագրել է՝ *մարդ, անչն, այր, կին, աղջիկ, մանուկ, մայրաղ, ազգակցական տերմինների սկզբնական ձեւեր՝ հայր, մայր, ուսուր, դուստր, որդի, եղբայր, քույր, հաւ, հան, «տատ», քոռն, սկեսուր, հարսն, նու, յարայ, մայրու, որք, կասկածելի է ամուրի, քեռի, աներ, հոր, «փեսայ», ուրուջու «խորթ որդի», այրի բառերի հնդեվրոպական ծագումը*:

Նշում է նաեւ, որ զգալի թիվ են կազմում հիշյալ բառերից բարդությամբ կազմված անվանումները, որոնց զուգահեռներն առկա են հնդեվրոպական լեզուներում, ինչպես՝ *հարեղբայր, մարեղբայր, եղբայրորդի, այլեւ՝ հարաբրոր, մարաբրոր, դուստր եղբոր/մ* եւ այլն, մինչդեռ բացակայում են կնոջ ազգականների որոշ նշանակումներ, որոնք հնդեվրոպականում չեն եղել մասամբ, օրինակ՝ զոքանչի համար չկա բնիկ հայերեն անունը, կասկածի տակ է առնված *աներ, հոր* «փեսա», բառերի հնդեվրոպական ծագումը, *փեսայ* բառի ծագումն անհայտ է: Մինչդեռ հատկապես շատ են խորթ ազգականների անունները՝ *յարայ, մայրու, ուրուջու*: Հի ընդունում նաեւ, որ *այրի* բառը կարող է գոյացած լինի այր-ից: Բերված բառերը, ըստ մեր առաջադրած ենթախմբավորումների, ներկայացնում են հետեւյալ պատկերը՝ արյունակիցներ են համարվում գրեթե բոլոր անվանումները եւ *չհաս* են, բացի *հարսն, փեսայ, զոքանչ, աներ* եւ նրանց ազգականներից: Հարսի հարազատները *հաս* են ամուսնու արյունակիցներին, եւ ընդհակառակը, բացի մորաքրոջ զավակներից ու նրանց անմիջական ճյուղավորումներից, ինչպես այդ մասին առկա է նահապետական ընտանիքի կառուցվածքն արտացոլող որոշ գրանցումներում:

Գերդաստանի նահապետը կամ քուրմը, կամ էլ *կարմիր վկան* (կնքաւոր), մերժում են նման ամուսնությունները, իսկ եթե կան շեղումներ, ապա անմիջապես վճռում են համայնքից, առաջարկում փոխել բնակավայրը, հեռանալ գերդաստանից:

Եվ այսպես՝ պարզվում է, որ ազգակցությունն արտացոլող անվանումը տրվել է ոչ թե պատահականորեն, այլ հաշվի են առնված *արյունակցական եւ ոչ-արյունակցական* կապերը (ժողովրդի մեջ տարածված՝ յոթ պորտը)՝ աստիճանական ճյուղավորումով, որը Տարոնում-Բագրեւանդում ընդունված է հետեւյալ հերթականությամբ՝ *ափուպապ, մեծ պապ (ճօպօ), պապ, հայր (հէր), որդի (տղա), քոռ, ծոռ*, որոնք իրարահաջորդ սերունդներ են, տոհմածառի ճյուղավորում եւ կարող են օգտվել ժառանգական ու սեփականատիրական իրավունքից: Արու զավակների բացակայության դեպքում ժառանգական իրավունքից օգտվում են հորեղբայրը կամ նրա զավակները՝ համապատասխան ճյուղավորումներով:

Այսպիսին է եղել ժառանգասեփականատիրական իրավունքը մինչեւ 1920թ.:

Միմյանց հետ ամուսնանալու իրավունք է տրվում այն զույգին, որ անցել է «յոթ պորտի» արյունակցական կապերը ճշտելուց հետո:

Մոր կողմից՝ այդ իրավունքից զուրկ էին՝ *մորեղբայրը, քույրը, հայրը, քրոջ զավակները*, նույն կնոջից սերված թոռներն ու ծոռները, բայց մոր եղբայրը, նրանց ազգականները կարող էին ամուսնանալ նույն գերդաստանի այլ ճյուղավորումների հետ:

Ազգակցություն ցույց տվող բառերն ունեն հնչյունական մի ընդհանրություն՝ բառավերջի -ր ձայնորդն է, ինչպես՝ *հայր, մայր, եղբայր, ուսուր, դուստր, սկեսրայր, սկեսուր, աներ, հոր*, «փեսա» արմատական այդ հնչյունը առկա է նաեւ *որդի, հարսն* բառերում:

1 Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախադրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 259:

2 Տե՛ս, Գ. Ջահուկյան, նշվ. աշխատ., էջ 259-260: